



գանձում պարտեզները զետեղելով կ'անցնելի, ու գրան ազնի կեցող բաշ պտուս կին մը սկսա զիս ասպարէզ կանչողի մը կերպարանքով գլուխէս մինչև ոտքս նայել: Ետա զուարճազի էր այդ կերպարանքը: Քարի կինը արդեօք կը կարծէր թէ տունը կը գնան: Այդ չ'եմ գիտեր, բայց լաւ գիտեմ որ եթէ ձեռքը աւել մ'ունեցած ըլլար, գէշ էր իմ վիճակը: Պատաւ կինը ձեռքին մէկը բռնեց րրած կ'արտաբերէր այնպիսի խօսքեր, որ չհասկնալէս գատ չ'ի ալ լսեի: Լաւ գիտեմ սակայն որ հայրսնայինքն էին անոնք: Խնդումը զիս բռնած էր. բայց փայտի սկեւ և ծանր կեցածէի, բարկաշարք Անգղիացի մը կերպարանք առնելու համար. բարի կինը միշտ կը նայէր ետևս, և երբ ետևս գարձայ տեսայ որ փողոցին սնկիւնը կեցած գետ զիս կը դիտէր:

— Բրտեղիքի տանը անկիւնը . . . կեցէր ուրեք, ըսաւ Օրբորդ Օպլա, սապէս գլխարկով սանկ ի շոր կին մը, այնպէս չէ:

— Զիշտ այդպէս: — Օ, կատարէ՛ք է՛նա. Եթէ աւելի լաւ ճանչցած ըլլայի, զձեզ իրեն ըսով կը տանի տեսնելու համար: Խնդումը բան մը պիտի ըլլար:

— Երբէ՛ք: Դուք իրեն իմ սվ ըլլալու բացատրելէ առաջ, նա իր անկողնու արդէն իմ երեսէս պիտի իջնէր:

— Ասկէ գատ, շարունակեց իմ սիրունիկ հերբնկալս, բանի մը Պօլը արիկներն ալ տեսած պիտի ըլլար, որինսակի համայ Տիկին Պօլան և իմին ծեր բարեկամուհի Տ. Ժուպեր, որոնց խառնակութիւնն աւելի լաւ գաղափարներ պիտի կա՞մէր տան ձեզի:

— Կը ճաշնաք զանոնք: — Ետա լաւ կը ճանչնամ, և եթէ կուզէր այսօր կէս օրէն վերջը կընանք հոն երթալ:

— Այլի՛. դուք սվ կ'ուզաք, գնապետ: — Այսօր անկողնի է. Այս շաբթու ամեն տեղ կ'ուզած են, և բաւական երկար նա մակ մը ունիմ գրկիք:

— Կարծեմ թէ կը կուտին գետ. մտիկ ըրէք որ տեսնաք:

— Իրօք, Թնգանօթի ձայներ կը լսուին: — Արեւելեան կողմը, զօրավար Բօլ-Քաբի բաժանումին մէջը ըլլալու է, ըսաւ Սթաքսթիլ գնապետ:

— Անայտեցեալ գիւղակի մը վրայ կ'արձանին Թնգանօթիներն անպատճառ:

— Միշտ սասնկ է: Երբ կը կարծեն թէ Պօլընը իրենց աջ կող մը կ'ըլլուն, իրենց ձայնին էր պարպեն. երբ կը կարծեն թէ ձայնը կ'ըլլան, կամայայտի մը աջին կը դառնան:

— Աչք կապուլ կը խաղան:

— Միայն, մերթ ընդ մերթ, անցնելու աստի պահակարանաց մը կը գրաւեն կամ գոճակի մը շարքը կուտեն, և ասոր անունը պատերազմ են գրեր:

— Մտիկ ըրէք. մտիկ ըրէք . . . բայց Թնգանօթի կը մտնեայ կարծես: Պատեւ, բազմը սպառնալակս, բանի մը մղին միայն հետու է:

— Օ՛ն, ըսաւ Օրբորդ Օպլա, Տիկին Ժուպերի բոլն երթանք: Երբ Թնգանօթի ձայնը լսէ, զարմանայի է նա: Չկրնար տեղը նստիլ. և շատ պիտի հետաքրքրէ նա զձեզ:

\* \*

Թրանսպարէն նախկին զօրավարին տունը շատ մարդ կար, և ետագետում մը կը տիրէր հոն: Տունը հայրնոտական տուննուր կը նմանի. բոլորը գետնայարի է. Տան գրեն կըր ներս կը մտնեն ձախ կողմը վերջուս (ճիւղիք) մը կայ, և աջ կողմը սպակ-

եայ մեծ պատահաններով (բօշք) մը որ հիւրանոցի տեղ կը ծառայէ: Տունըը հաստատուն են և ճօխ կերպով կահաւորուած: Այս հիւրանոցին մէջ երկու երեք ետանգուն, մանկամարդ կիներ օրիորդներ կային. և, վարանային մէջ ձեռքակ կառու մեծ գլխարկներով Պօլը կիներ կը վիճային:

Երբ կարէն վար իջնար ու իմ խաբի զգեստս տեսան այն խեղճ կիները, բոլորն ալ զարմացան մնացին բաւական ասին: Բայց հիւրանոցին մէջ օրիորդ Օպլա անուս առաւ շուտ մը, և ծերուկ Տիկին Ժուպեր պէտ բոլորովն ու հագուած, ձեռքս սեղանց ու միտ արիկներուն ներկայացուց: Տիկին Ժուպեր նիշար էր ու վախ. սակորները գորս ցցուած, աչքերը փոսն ինկած, չըթնոցները գոց էին. և բոլորովն հայառակն էր հանդուցեալ զօրավարին յասնկայ մէկ պատկերին, որուն մէջ խաղաղաւոր մարդը մօրթընն սակն կը ծպտէր, կլորիկ փորը գորս ցցուած էր, որուն վրայ կը շողար աշային բառեակ գոյնով ծապաւնը. մինչդեռ իր լայն կոթքն ու ուսերը զարդարուած էին խաչերով և տրեպներով:

Անմիջապէս բացատրեցին մեզի թէ ինչու համար էին մեր տեսած շարժումները: Այդ խեղճ կիները պատերազմի զացողներուն կիներն էին որոնք անգրիական կառավարութիւնը չ'ուզելով այլևս կերակրել միտ օրը զանոնք իրեն սահմաններէն անդին սլտի գրկեր, ապա թողլով զանոնք որ բանակին մէջ իրենց ամուսնիներուն ըով երթան. կիները կը հեծնէին և շատերուն կամ ծծող մանուկները գրկեցին էին որոնք կուլային կողբային, և կը ճչէին:

Որովհետև Տիկին Ժուպեր և զօրավարը ամեն ժամանակ հոգացեր են աղբատները, կիներն այս տան հիւրասիրութեան կօգտուէին: Տիկին Ժուպեր ալ բան մը չ'էր կըրնար ընել աղբատ կիներու: Միայն ընչ մը կ'օգնէր անոնց: Տակնուր թիւն մը կար, և այդ չ'էր թողուր որ իր ուղածին սկե տեսնուէր հետս. բայց իմ տեսածներս իրեն ըսած էն շատ աւելի հետաքրքրական էին:

Վարկեան առ վարկեան Թնգանօթի երկեակ, բառեակ, վեցեակ յաշարական հարուստները իրենց արձագանքով կը պողացնէին ամբողջ տունը: Այն աստի Տիկին Ժուպեր ստը ելաւ. իր շրթներէն ալ աւելի կը գոցուէին. իր աչքերը ակնոցին տակն սեղանալ կը դիտէին, և կ'ուզէր երթալ, կ'ուզէր որ կարգը ընկնէ, և միտ կիները ամեն շանք ի գործ կը դնէին որպէսզի չ'երթայ:

— Տիկին Ժուպեր շատ հետու է, և չ'են թողուր որ անցնէր, կ'ըսէին:

— Յետոյ, երբ տունը մի ընչ հանգարտութիւն արեց, զարձաւ գեղեկ գուռը և կիները ցորա ու ջրային շարժումներով մը ինձ ցոյցնելով կ'արծես ինձ ըսել կուզէր. — Բրանին կը տեսնէք, այնպէս չէ:

\* \*

Վարկեան մը վերջը բաժնուցանք Տիկին Ժուպերէն, Տիկին Պօլային երթալու համար, որ անոր մօտն էր:

Նոյն սեմով շինուած, նոյն վերանսան նոյն ընտրքը. միայն թէ հոս գարգիբը, տունկերը, ծաղիկները, աւելի թարմ, աւելի կենդանի էին:

Տիկին Պօլա երեսունոց, նուրբ, վայելչապէս հագուած, խորտեայ մազերով, սուրբ գլխարկով, պայծառ և խոշոր աչքերով կին մը, սեղանու օրիշ իրեք կիներու հետ հիւրանոցն էր: Ներկայացուելու վերջը նստայ տան արեւհոյն ըսով, որ իր ա-

մանայն զրայսվ տեղեկութիւններ ինքրեցի, և որ անկեղծօրէն գովեցի: Տիկին Պօլա հանդարտօրէն, կարծես ճամբորդելու քացած ըլլար իր ամուսնի, պատասխանեց թէ վերջի եկած լուրերը լաւ էին և կը յուսար թէ ուրիշ լաւագոյն լուրեր ալ պիտի առնէ:

Տիկին Պօլա ձեւուր մանիշակագոյն շըրջազետ մը հագած էր: Տանը չորս վին լեցուած էր շահարամի թաղարներով: Եւ նոյն ծագիկէն փունջ մըն ալ զրած էր իր կոթքը:

Միտ արիկները սպաւոր ըլլալու էին անշուշտ, որովհետև ծագիկ չ'էին գրած:

Անոնցմէ մին, մանուսնուր, աչքին գարկաւ:

Սա զիտ շատ երկաստարդ, թուի, սե, կրակարոց աչքերով բանալարներու մասին այնպիսի անհաշտ ձայնով մը կը խօսէր որ հասկցայ թէ սրբիկներէն մին կորնոցուցած ըլլալու էր: Ամենքն ալ նմանապէս, այնքան բարձրէն կերթային որ յոյս չ'կար թէ շուտ մը կը հանդարտին:

Վստահ եմ ամուսնոյս վրայ, ըսաւ մեզի Տիկին Պօլա, և գորս ալ կրնաք վստահ ըլլալ որ մինչև վերջը պիտի զմանգր:

Եւ թխագոյն Տիկինը, իր անունին ֆրանսական անուն ըլլալը, իրեն ֆրանսական արեւն ըլլալը, և ֆրանսացի ըլլալուն համար շատ գոհ ըլլալը ինձ ըսել վերջ, աչքերը ինձի վարձած է:

— Ինչպէ՛ս կ'ըլլայ որ, սակայն, Երբ պայի մէջ անմենք ալ կը վախնաք Անգղիացիներէն, մինչդեռ ասի մը զիւղացի անոնց դէմ զլուխ կը բարձրացնէ:

Պատասխանը Իրաւունք ունեցողներուն կը թողում:

— Մեր ամուսնիները բոլորն ալ թշնամայն գլմ գացեր են, ըսաւ ուրիշ կին մը: Եւ եթէ տուն վերանգանան կը փախցունենք զանոնք:

Մինչ այս արիկները տեղային բաներու վրայ կը խօսէին, ես սեղանին վառարանի ըով կանուած կիտարողը լսանալար պատկերը կը դիտէի որ տխար և արիկ Պօլան կը ներկայացնէր: Երբտասարը հաստիւնուն մէջ անուած էր այդ լուսանալարը. իրենց աւմուսնութեան մեկ յիշատակն էր անշուշտ այդ պատկերը, ուր հերոսը կը յայտնէր և ունէր արդէն այն յստակ ու ուղիղ նայուածքը որ բանակին մէջ գինք տեսնողներուն աչքին զարկած է:

Եւ անա գրանն առնի կանգ առաւ ձի մը արիկ Անգղիացի սպայ մը վար իջաւ որ ուտին վրայ կը կրէր գնդի համարակալին թաղը: Լոխն ու վերսպահեալ ըստաղափար ութեամբ մ'ընդունեցան զինք: Իրեն բանակցող պատերազմի վայրը զրկուած էր այդ Սպան, որ Տիկին Պօլային նամակ մը բերած էր: Նամակը բաց էր, և մինչև իսկ չ'էր կնքուած:

— Գիտէ՛ք թէ որ է ամուսնու, հարցուց Տիկին Պօլա, նամակը կարդալու վերջը: Սպան խոստովական շարժումէ մ'ըբաւ, պարիկ մը խնկաց և ըսաւ.

— Չ'եմ գիտեր:

Այս պահուն միտ երեք արիկները առանց մասնակցելու տեսարանին, շարունակ հոլանտական լեզու: Եւ խօսակցէին, և թրխագոյն մանկամարդ արիկնոջ նայուածքները միշտ անողբ էին:

Ոտքի ելանք հրաւիրու տալու համար, ես խոստացայ նորէն գալու արիկին Պօլային մեծարանքներս մատուցանելու, ինքրիկով որ բարեկենս զօրավարին հաղորդէ:

— Սոսկալի բանք են այս արիկները, ըսի

ես Օրբորդ Օպլան. և եթէ երբէք Պօլաները տեղի տան, իրենց կանանց կամքին բոլորովն հակառակը պիտի ըլլայ:

— Եւ բոլորն ալ միենայն են. եթէ կուզէք Տիկին Վան Ռարմբրոյի տունն երթանք և պիտի տեսնէք:

Անոր ալ երկու տղաները դօրք են:

Տիկին Վան Ռարմբրոյ ի տունն ալ միտ երկու տուններու ըրած ընգունելութիւնն ըրին. Տիկինը իր աղջկան հետ միտակ էր, և աղջկան գլխարկին շուրջը Թրանսպարէն գոյններով ծապաւն մը զաւաւած էր:

— Անցեալ օր դուք իմ աղջիկս տեսնելու կէք ըսաւ ի մէջ այլոց արիկները. աղջիկս այն օր ալ միենայն թրանսպարէն բաւերփեան ծապաւնով գլխարկը գրած էր: Չինուր մը հըրաման ըրաւ որ վերջնէ վայն: Մերեքը Այնտոնի գինուորուզեց որ բանի ձեռքն առնէ զայն: Անոր ձեռքը դեռ չ'գրած, աղջիկս ծապաւնը ինքնիք ձեռքովը փրցուց. Հետեւալ օրը, սակայն, ոտիկանին կը զանգատի թէ թրանսպարէն անուած չ'է գետ, թէ պաշտօնական կերպով Հարաւային-Արիկեան Հասարակադեալութեան կը պատանդէր, և թէ հետաքրքիր իրաւունք ունինք մեր գրոշի գոյնը կրկնու: «Տիկին, ըսաւ ինձ սպան, մի ընչ բարկացած, պատերազմը խաղալիք չ'է»:

Կարելի է. ըսի իրեն, բայց ամեն օր մեզ լացնելու չէք:

Գիտէք որ բոլոր այս Պօլը կիները պարզապէս Հոլանդացի կիներու սիրտն ու ձեն ունին:

Այդպէս սերունդները պիտի ցոյց տան ստիկայ:

Պօլը կինելու հեղինակը Անգղիացիներու թրանսպարէններուն ամեն օր կլցուցած արիկները, տուած նեղութիւնները գործած անիքաութիւնները երեսուն հանելով կը վերջացնէ յօգուածը:

ՎԱՅԷ

ԱՂԲԱՏ ԳԱՂԹԱԿԱՆԻ ՍԵ ԵՐԱՁԸ

Երազ տեսայ, երազ մը սոսկալի:

Մեռած էի:

Եկեղեցիին կողմին է որ համաչափ և տիրասարուս ներազնակութեամբ իր արդիւր արցունքները կը թափէ հատիկ հատիկ: Յուզարիւարութեանս յառաջարանն էր ատիկայ:

Ինձի պէս բանի մը գաղթականներ, ձեռքերին գրպանուն մէջ, տխուր բայքերով եկեղեցոյ բակը կը շափէին վեր վար:

Ներսը՝ սոստանին ճիշտ մէջտեղը, պող սպիտակ բարեկուն վրայ գրուած էր զագաղըս սե, կոկիկ, անշուք:

Գլխուս վրայ խոշոր մոմ մը իր ճարպկ արցունքները առատօրէն կը թափէր և վառելու աւելի կարծես կը հալէր:

Աստին անդին տատանող և գրեթէ կախուած կանթնիկները և ջահերը, խնայող չեզոքութեամբ մը, կը զանային իրենց ըստի փայլը տալու այդ ողորմելի մեռելին:

Միտնեմքս, իմինեմքս հետու, օտարութեան մէջ պանդխտօրէն մեռած էի և հիմայ, անսարբեր, զգայագրծ մարդոց յանձնուած էր զիս իմ վերջին կայանս հասցընելու խնամքը:

Պահարանին մէջ մէկ երկու քահանայ, բունի մը տիրացու, ունեւանուկ բարոպան մը և կէս երկոտասանեակ յուզարիւարներ տար կերպով կը վիճարանէին Առաջնորդին

հանելուկի վիճակին վերածուած գալստեան վրայ:

Դեռ ոչ ոք կար եկեղեցին, լուսարարը միայն հայտնաբերով պատրաստութիւններ կը տեսնէր:

— Աս դաղձակահաններն ալ, կըսէր մտովին, խումբ խումբ եկան, հիմայ ալ մէկիկ մէկիկ կերթան կոր, բաշտուելու բան չէ աս: Ապրած ատենին ալ պէջու, մեռած ատեննին ալ պէջու:

Քահանաները, իրարանցումով և յայտնի սրանեղութեամբ մը իրենց բորուրարները վիզերուն անցուցին:

Եւ հանդէսը սկսաւ:

Գաւթի մէջ, շատ մը հետաքրքիրներ, մեծիկ երթալու մէջ ժամանց մը փնտոող անհասանք իրենց սովորական տեղերին գրաւեցին:

Հաստ, խոպոտ ձայներ իրարու կը խառնուէին գմբէթին տակ:

Խառնիկ և մոմերուն մուկը գորշ ըստուերներ կը սփռէին գազազիս վերեւ:

Եւ տըրտըր շուտ շուտ կը կարգար:

Աղօթքը շարականին և աւետարանը գըրքին կը յաջորդէին հիանալի փոթիտութեամբ մը:

Այդ անգոյս և անտարբեր բերաններուն մէջ բառեր ոչ նշանակութիւն ունէին և ոչ ալ տխուր խաչերը ազդեցութիւն:

Շուտ լինցնելու համար աղօթքները կը թափթփէին երկայն մտքներու վրայէն, բառերը կէս կէս կը հնչուէին և ամենուն ձայնը փխփանակ կոկորդուս, իրենց թթերէն դուրս կուգար:

Դագազս այս անգամներէ շրջապատուած էր սեւ, կոկիկ, անշուք:

Չիս իմ տեղս հասցնելու փոյթ մը, ետանդ մը կար ամենուն բով:

Express ուլ, rapide ուլ ճամբորդութիւն մըն էր այս վարէն դէպի վեր:

Քահանան գեռ վերջին աղօթքը չի լընցուցած, արդէն լուսարարը ամեն բան ժողոված և իրենց տեղը զետեղած էր: Ամբողջ մոմերը մարած էին, երկու քահանաներէն մէկը կամացուկ մը կծկէր դրած էր:

Չորս բեռնակիրներ, նախկին բարեկամներէն, կոշտ ձեռքերով, ահազին, աղակալի բալլերով դագազս դուրս կը հանէին, ինչպէս մարտէն դուրս կը հանեն սնտուկ մը որուն վրայ fragile բառը գրուած չէ: Աղքատին սեւ ձագը շիշով լեցուն սնտուկ մը իսկ չարժեր:

Հայտնակով դուրս հանեցին զիս եկեղեցիէն:

Դրան առջև ձեր հոգաբարձու մը որ պընակներուն հաշիւը կը տեսնար, բարձր ձայնով մը խօսքը կ'ուզէր ժամկոչին և գոհունակութեան շեշտով մը կըսէր:

— Մեղքոն աղբար, պատին վրայ, մեռնող դաղձակահաններու հաշիւին տակ թեպէջիլ մը քաշէ, մեռելը դուրս չելած, ետքէն կը մոռնաս:

Այդ խրատը արթնցայ:

Մնամ միշտ գաղթական Սինեմ

Ընդօրինակեց Յ. Ալֆիմ

ՅԱՌԱՉԻԿԱՅ ԶՈՐԵՐՇԱԲԹԻ

ԻՆՉՈՒ Կ'ԱՍՈՒՍՆԱՆԱՆ

ՎԵՐՉԻՆ ՀԵՌԱԳԻՐ

Վիէննայէն և Հոովմէն ստացած ազդարարութեանց համաձայն՝ Պ. Քրուկէր այդ երկու քաղաքները չը պիտի այցելէ, ինչպէս և Պերլին:

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ԳԱՀԻՐԷԻ ԳԱԼՍՏԵԱՆ ՎԱՐՓԱՐԱՆԸ

Ուրախութեամբ կաւետեմք թէ Ազգային վարչութեան քաղաք. յողովոյ անցեալ նիստի որոշմամբ՝ Արժ. Տ. Սամուէլեան քահանայ Գահիրէի Ազգային Գալստեան երկսեռ վորժարանի լիազօր տեսուչ և ուսուցիչ կարգուած է:

Ազդարն Ազգային վարչութիւնը գիտցաւ օգտուիլ առիթէն՝ նկատի առնելով Տ. Սամուէլեան հօր ուսուցչական ասպարէզին մէջ ցոյց տուած օգտալից գործառութիւնն որու վրայ «Նոր Օր»-ի նախորդ թիւին մէջ արդէն մանրամասն ծանօթութիւններ տրուած էին:

Այն օրէն ի վեր որ վսեմ. Ազիզ Պէյ Եռուսեֆ հրաժարած էր վարժարանի հոգաբարձութեան պաշտօնէն, վարժարանը սխուր և անկերպարան վիճակ մը ստացած էր: Ծնողքները հետզհետէ իրենց զուակները վարժարանէն բաշտած էին:

Կը յուսանք թէ Տ. Սամուէլեան հօր եռանդուն գործունէութեամբն պիտի կրնայ դարձնուիլ օր առաջ՝ իրաց այս սխուր կացութիւնը և քիչ ատենէն վարժարանը յառաջդիմութեան փայլուն շրջանի մը մէջ մտնել:

ՆՈՐ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ

«Նոր Օր»-ի նախորդ թիւով Ազգային վարչութեան ուշադրութեան յանձնարարելով գիտել տուած էինք թէ երեք բաժանայ չեն բաւեր Եգիպտոսի համար:

Ազգային վարչութիւնը՝ Գալստեան վարժարանի նոր կազմակերպութեան առթիւ՝ սոյն խնդիրն ալ կարգադից միանգամ ընդ միշտ:

Արժ. Տ. Սամուէլեան հօր յանձնուեցաւ Գալստեան վարժարանի կրօնագիտական դասախօսութեանց պաշտօնը զոր մինչև ցարդ կը վարէր Տ. Եզնիկ բաժանայ:

Արժ. Տէր Եզնիկ հայր միմիայն հովուական պաշտօնով պիտի զբաղի և իբր այցելու քահանայ պիտի զըրկուի մօտակայ գիւղերը:

ԵԿԻՊՏՈՍԻ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Կը լսենք թէ Ազգային Առաջնորդարանը մտադիր է եղած 50 ոսկույ զումար մը ևս զրկել Պոլիս՝ Եգիպտոսի նորընտիր առաջնորդ Գեր. Այվազեան Սրբազանին որ ճամբայ ելնէ Պոլիսէն: Ասկէ առաջ զրկուած յիսուն ոսկին Սրբազանին չէ յանցուէր:

Անցեալ կիրակի դեկտ. 2ին Պէրպէրեան Առաքել էֆէնտիի բնակարանը տեղի ունեցաւ Տիար Նշան Գայսէրլեանի նշանախօսութիւնն ընդ Օր. Մարի Ա. Խորխոսունիի. ներկայ էին Արժ. Տէր Մամբրէ բաժանայ վարդապետ և Տէր Եզնիկ քահանայ Պալուսի, նոյնպէս ուրիշ շատ մը բարեկամներ:

Մեր անկեղծ շնորհաւորութիւնները խօսեցեալներուն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ի Ր Ք Ի Ս

Երբէն կը գրեն թէ՛ նոյն տեղոյն անդդիական դեպքանք՝ Օ. Քոննըր փոխեր է իր զինոյ քաղաքականութիւնը և Բ. Դրան՝ Հայոց խնդրի մասին՝ խիստ ոճով յայտագիր մը ներկայացուցած է: Օ. Քոննըր փոխած է իր քաղաքականութիւնը՝ որովհետեւ տեսած է որ Դերմանիոյ ազդեցութիւնը Պոլսոյ մէջ հետզհետէ կը շատնայ, և հետեւաբար Դերմանիոյ խօսքը աւելի ազդեցիկ է քան թէ Անդրիոյ:

ՄԻՍՅԵԱՆ ՆԱՀԱՆԳԻ

Ինչպէս ծանուցուած էր, վերջերս Ամբիկայի նախագահութեան ընտրութեանց ժամանակ մեծ տակնուվրայութիւն առաջ եկաւ մասնաւորապէս Նիւ-Եօքթի և Շիքակոյի մէջ: Հասարակապետականներու և ռամկավարականներու միջեւ հակա պայքար մ'էր տեղի ունեցաւ: Այդ պայքարին հըսկայութեանը վրայ լաւ գաղափար մը կազմել տալու համար հոս կը գնենք երկու կուսակցութեանց կողմէ եղած ծախքերն և զրուուած շրջաբերականներու թիւը:

Հասարակապետականները 70 զանազան շրջաբերականներ հանած են, ասոնք կը բազկանան մէկ թերթէ ըսկըսեալ մինչև 436 երեսներէ բաղկացեալ զրքերէ: Այդ զրքերէն 80 միլիոն օրինակ զրուեր են, և ասոր համար 160,000 տոլար ծախսեր են:

Ռամկավարականները 138 զանազան հրատարակութիւններ հրատարակած են և զրուած են 25 միլիոն օրինակ: Մաք. քիլիի մէկ նամակըն (հասարակապետականներու առաջարկը ընդունող նամակը) 8 լեզուներով տպուած է հինգ միլիոն օրինակ նակ: Պրանանի խօսած ճառերէն մէկը 11 լեզուներով տպուած է 8,000,000 օրինակ: Այս ամենուն երկու կուսակցութեանց ըրած ծախքը մէկ ու կէս միլիոն տոլարի կը հասնի: Պրայեան շատ վարժ ատենաբան մ'է. ընտրութեանց միջոցին օր եղած է որ մինչև 31 ճառ արտասանած է:

Երկու կուսակցութիւնները 45—50 հազար պաշտօնական ատենաբաններ ունէին իրենց մէջ: Ամեն իրիկուն 7000 ի մօտ ատենաբանութիւն կ'ըլլար: Վերջապէս՝ յաղթանակը տարաւ Մաքիլէյ՝ հասարակապետական կուսակցութեան պեսը:

Պրիւսէլէն Նիւս Վիէնըր Թակպատ լրագրին կը գրեն թէ Պ. Քրուկէր Լաւէյ հասնելուն պէս Տէրութեանց միջամտութիւնը պիտի խնդրէ:

Եթէ չ'լուրի իր կողմէ իր ձեռքին տակ գտնուած բոլոր պաշտօնական թղթերը պիտի հրատարակէ Յիշեալ լրագրը կ'ըսէ որ Թրանսվալական այս պատերազմի ժամանակ Անդրիոյ կատարած դերը կը պարունակեն ոմո թղթերը:

Նախագահ Յիշեալ թղթերը հրատարակելէ վերջ՝ Թրանսվալ պիտի մեկնի հոն գիւցազնաբար մեռնելու համար:

— Դերմանիոյ մասուլը մեծա մասամբ, և ի մէջ այլոց «Քօլմէլ Զայթունկ», կ'ըսեն թէ «բնական է որ Կայսրը չ'պիտի ուզէր ընդունիլ Պ. Քրուկէր. որովհետեւ ոճիր մը պիտի բլլար այդ ընդունելութիւնը, և Դերման կառավարութիւնը ոճրագործ մը եթէ Պ. Քրուկէր յուսադրելէ վերջ այս արիւնտուշտ և անօգուտ պատերազմը շարունակուէր»:

— Պերլինի մէջ երիտասարդ գիտնականներ ընկերութիւն մը կազմած են, և միտք ունին դէպ ի Խրիմ, Սիւպերիա և Կովկաս ուղեորութիւններ կատարել յիշեալ տեղերու բնութիւնն ու կենաց պայմանները ուսումնասիրելու համար:

— Մարինի իտալացի բժիշկը նոր դեղ մը գտած է գիականոր պահպանելու համար: Այդ դեղը որ Մարինեան Գինի կը կոչուի, ոչ միայն դիակները քարացած, այլ նաև կակուղ կը պահէ: Յարգելի բժիշկը Եւրոպայի մեծ գէմբերուն ամենաբնիկ մէկ մէկ շիշ զրկած է: Պ. Մարինի մուցած չէ նաև Բարիլոն Պարսից լիազօր գործակատար Հայագրի Նազար աղան, որ այդ նուէրին կը պատասխանէ այսպէս «Մեր պարսիկ բանաստեղծը՝ Հաֆիզ կ'ըսէ, թէ գրած է Միդրա աղան, «այնպիսի գորաւոր զինի մը կուզեմ որ կեանքի դառնութիւնները մոռցնել տայ»: «Եթէ, կը յարի Հայագրի մեծ պաշտօնեան, նա տեսած ըլլար ձեր գինին, Պ Մարինի՝ իր երազը իրականացած կ'ըլլար»:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ ՏԱՐԻՈՅՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11ԷՆ ՍԿՍԵԱՆ ՎՄԱԶՈՒԹԵԱՆՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿՆԻՔՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ—ՆԵՐԿԱՅՈՅՏՈՒՑԻՉ ՏԻԱՐ ՍՄԲԱՏ ՓԱՓԱՋԵԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՉԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»-Ի ԸՆԿԱՆԱԳԻՐՆԵՐՆ ԱՆՎԱԻՐ ԿԸ ՆԿԱՏՈՒԻՆ:

ՔՐՈՒԿԵԻ Ի ԲԱՐԻՉ

(Յղթակցութիւն Փարիզէն)

Մեծ ոգևորութեամբ Բարիլի ժողովուրդը ընդունեց Նախագահը: Կայսրանէն յՍկրիբ հիւրանոցը ուր այժմ կը բնակի, բոլորովին յաղթական գնացք մը ունեցաւ կրիկէր. հարկը հազարներով մաքուր որ կայարանին բոլորտիքը հաւաքուեր էր, երբ Նախագահը կայարանէն դուրս ելաւ, այնպիսի ցոյցեր ըրին որոնց նմանը շատ քիչ անգամներ տեսնուած էր երկար տարիներէ ի վեր: Ճանապարհին այդ արդէն պատկառելի բազմութիւնը կրկնապատկուեցաւ և երապատկուեցաւ, իսկ հիւրանոցի բոլորտիքը խոնուած բազմութիւնը և անոր արձակած աղաղակները բոլորովին անպատմելի են: Նախագահի հիւրանոց հասնելէն մինչև գիշերուան ժամը 12ը և առաւօտեան 1—2ը խոնու բազմութիւնը բռնած էր շրջակայ փողոցները, բուլվարը և օրէրայի հրապարակը: Բոլորովին արդիւուած էր Սկրիբ փողոցէն անցնելը, հարկա-

սոր ոստիկաններ փողոցի երկու կողմերը բռնեցին և միայն քարոզ ունեցողներու թիւը կուտային անցնել: Սկզբը օթելի բնակիչներուն ալ մասնաւոր քարոզի բաժնուած էին, որպէս զի կարենան դուրս ելլել և մտնել, այդ երկու տեսակ քարոզներէն զատ ուրիշ և ոչ մէկ նոյնութիւն հաստատող թուղթ զօրութիւն ունէր ոստիկաններուն առաջ: Ասոնք խտորէն կ'արգելէին անցնել Սկզբը փողոցէն:

Շարաթ օրը հարիւր հազարներով անհատներ, Օթել Սկզբի շուրջը հաւաքուած 12-13 ժամ շարունակ գոչեցին «կեցցէ՛ կրիւկէր, կեցցէ՛ թրանսվալ, կեցցէ՛ ազատութիւն, կեցցէ՛ն Պօէրները...»: Մի բանի անգամներ՝ փողովորդը այնքան խրտացաւ որ կտորեկուր և հանրային մեծ կտորեկուր երթեկուղիները բոլորովին դադարեցաւ 13-20 վայրկեաններով և միայն ոստիկանութիւնը և զինուած զօրութիւնը կարողացաւ երթեկուղիները նորէն հաստատել: Հեծեալ և հետիոտն հասարակապետական պահապան զօրքեր, հարիւրներով ոստիկաններ, զիշեր ցերեկ հոն կեցեր են ժողովուրդը ցրուելու և փողոցային երթեկուղիները ազատ թողելու:

Շարաթ օր կէս օրէն յետոյ ժամը 4-5 ին տեղի ունեցաւ պաշտօնական այցելութիւնները: Թրանսվալի Նախագահը այցելութեան գնաց Ֆրանսայի Նախագահին. կէս ժամէն յետոյ Պ. Լուպէ փոխադարձ այցելութեան կուգար Պ. կրիւկէրի և անոր հետ կը մնայ մօտ մէկ քառօր ժամ:

Երէկ կիրակէ, թրանսվալի Նախագահը իւր բոլոր օրը կրօնական արարողութեանց և ընտանեկան կեանքին նուիրեց, անբողջ օրը շարաթ օրուան բազմութիւնն մի և նոյն եռանդով, մի և նոյն աւելնով շարունակեց իւր ցոյցերը:

Շարաթ կիրակէ օրերուն մէջ, մեր ոստիկանաւորներն առած տեղեկութեան համեմատ հարիւր յիսունէ աւելի մարդիկ ձեռքաւարուած են ոստիկաններու չհնազանդելուն և կամ զանոնք անարգելուն համար, բայց ատոնցմէ մօտ հարիւրը անմիջապէս արձակուած են: Ցոյցերը ի նպաստ Պօէրներուն, Բարիդի բոլոր թողերուն և զըլխաւոր փողոցներուն ու բուլվարներուն վրայ տեղի կ'ունենան: Ուսանողներէ, զործաւորներէ, դպրոցականներէ, կիներէ բաղկացած բազմաթիւ խմբեր կանցնին երբեմն դրօշակներով «կեցցէն՝ Պօէրները, կեցցէ կրիւկէր կեցցէ՛ հասարակապետութիւնը, կեցցէ Ֆրանսան, անկցի՛ Մեզիան, անկցի՛ Վիկտորիան, անկցի՛ Չամպէրլըն...» և ուրիշ զանազան ազգականներ բարձրացնելով: Շատեր զանազան երգեր երգելով — Մարտէյլէզը, Պօէրներու երգը ևն. — կառավանան, և այսպէս կը աւել ամբողջ օրը և գիշերը և առաւօտեան մինչև ժամը 2-3 ը:

Ժողովուրդը ինչպէս կերևայ փորձէն վերին աստիճանի համակրութիւն ցոյց կուտայ դէպի կրիւկէր և Պօէրները, ցոյցերը այն աստիճանի հասած են որ այսօրուան Լոնտոնի թայմզ քարոզը կ'ըսէր թէ եթէ Մեզիան մէջ

նոյն ցոյցերը տեղի ունենային կարելի չպիտի լինէր Մեզիան ժողովրդեան առջևը առնուլ, բայց Ֆրանսական կառավարութիւնը ինչ պիտի ընէ կամ ինչ պիտի խոստանայ թրանսվալի յարգելի Նախագային, այդ դեռ յայտնի չէ և միայն այսօր պիտի կարելի լինի իմանալ, վասնզի այսօր այդ մասին պաշտօնական բանակցութիւնները տեղի պիտի ունենան: Շատ հաւանական է թէ Ֆրանսան խոստումներով պիտի գոհանայ, խոստումներ քաղաքավարական, քաղաքադիտական և շատ էլաստիք, մանաւանդ որ այս միջոցիս Ֆրանսան մի բիշ անակնկալի եկած է Մեզիո-Գերմանական վերջին համաձայնութիւնէն և կամ եթէ կուգէր Գաշնակցութիւնէն յետոյ: Եթէ այդ գաշնակցութիւնը որ միայն Չինական խնդրոյն համար լինել յայտարարուած է. յանկարծ բոլոր խնդիրներուն համար լինել յայտարարուի, ինչ պիտի լինի, չէ որ Գերմանիոյ ետեւ կը դրոշմուին Աւստրիա և Իտալիա և չէ որ վերջին օրերս շատ կը խօսին Գերմանո-Աւստրո-Իտալական Գաշնակցութեան վերանորոգման մասին: Ֆրանսա ինչ պիտի ընէ երբ այդ երեք պետութեանց հետ գայ միմեայ նաև Մեզիան, իրաւ Ռուսական Գաշնակցութիւնը ունի, սակայն Ռուսաստանը շատ հեռի է Ֆրանսայէն մինչ Մեզիա շատ մօտ է երբեք Գաշնակցութեան և յիշեալ չորս Պետութիւնները խիստ մօտ՝ սահմանակից են Ֆրանսային: Արդե՛ն Չարի հիւանդութիւնը շատ վտառահար շարք Ֆրանսայի, բոլոր այս իրողութիւնները պիտի ստիպեն Ֆրանսան քաղաքավարական ձեւեր գործածել և միայն էլաստիք պատասխաններ տալ:

Մէլիք Ս. ԴԱԻԹ ԲԷԿ

Le Gérant J. MUNIER  
Տպաւ. «Միուրիւն».— Թ. Ս. Փափնգեանի

**ՊԱՆԳ ԼԻՕՆԷԶ**  
ԸՆԴՆԱՆՈՒՐ ԴՈՐԹԱԿԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ  
**Մ. ՍՕՍՕՅԵԱՆ**

Լիոնի հանրածանօթ գրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի գործակալն ալ, Տ. Մկրտիչ Սօսոյեան, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վտառահարութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի քաղաքապետութիւնէն պաշտօնապէս վաւերացուած փոխանորդագրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ գրամական և ֆուտի ֆոնդիէի, վիլ տը Բարիի և Գաղղիական ամէն արժեթուղիներու գործողութիւններ, գանձումներ: Ամսական շնչին դումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պտհետի բաժնեթուղթ մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փափաքողները հաճին դիմել Նիւպոսի վրայ փաստաբան Ռարթաքիի գրասենեակը:

Թղթակցութիւն և կամ գրամ զըրկել հետեւեալ հասցէին:

**Մ. ՍՕՍՕՅԵԱՆ**  
Ի ԳԱՀԻՐԷ

**ԱՏԱՆԱԲՈՅԹ**  
**Պ. ՆԻԿՈՂԻՍՏՍ**

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը լս Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 գտնիկոնը:

Կը բժշկէ բերնի և աղուայի ամեն տեսակ հիւանդութիւնները: Աղքատները ձրի կը գործանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

**ՊԵՍԵԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.**  
ԱՍԵՐԻԿԵԱՆ ԳԵՐԱԿԵՐ  
ԱՐԱՅ ԵՒ ՏԻԿԱՆՑ  
ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապրիլի մեծ պողոսային վրայ Տայիւայի Սանիթի դիւստը, նախկին Ելիսթակոն գործիկներու վան առուներ:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք ալիւց հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ զիմոյ Պատ. յաճախորդները, գործի մարքութեան, զիններու չափաւորութեան և ճշդ ապահովեան կողմէն:

Մեր գործատեւը զին մէջ կ'աւանդուին նաև ձեռագրութեան գասեր ամերիկեան ամենալիւրջին կատարելադրուած մէթոտով:

Մանրամասնութեանց համար գիմել մեր գործատեւը զին:

**ՃԱՃԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ**

**ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱՋԱՆՃԵԱՆ**  
Շարա Սպու-Սապան  
Նիւու-Տնիվեսիլ Ղեղարանին դիւստը.

Օգտաւն ու զուարճալի դիւր. մաքուր ու վայելուչ սպաս. համեղ ու մեղաքար կերակուրներու զանազանութիւնն, անխարդախ պատրաստութիւն. ճօն ճաշացուցակ մը դիւրամատչելի գիներով: Ե՛հա՛ Գաղանձեան եղարց ճաշարանը:

Ո՛վ՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող գիմէ, վտառ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախողը պիտի դառնայ հայկական ճաշարանին:

**Տ Պ Ա Ր Ա Ն**  
**Ի ԳԱՀԻՐԷ**  
ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ  
**ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ**  
**ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱԶԵԱՆ**  
Սոյն նորակազմ աւարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցիտոմներ, մահազգեր, հարսանեաց հրաւիրողներ, կանոնադրներ, նամակազուլներ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն:  
Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն խնամօք և մաշակաւոր սպագրութեամբ:  
**ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ**